ԻՆՔՆԱՍՊԱՆ

Հեղ.

ԱԼԵՒՈՐԻ

Ցընորք բիւրաւոր վրշտայոյզ խեղճին
Անբաժան ընկերք ուխտած են լինել.
Ո՛չ մշտագարուն վայրը Եդեմին
Դաժան ցընորքը զօրում է ցընդել։

Նա հառաչում է այն զբաղթ այգուն՝
Երբ համատարած ափին է շողում.
Բիւր հրաշալիք բընութեան սիրուն
Նորա թախիծը ցրել չեն զօրում։

Սէր հարազատին խօսում է սրտին,
Սէրը վաստակի նորան գուրգուրում,
Վայելք և հաճոյք փայլում են խեղճին,
Նո՛ր կեանք և նորից նորան են ժրպտում։

Բայց ո՛հ, թոյլ են այդ ամենը բընաւ
Ցուսահատ հոգւոյ լուծել շղթաներ.
Եւ նորա կեանքին վախճան ու զբրաւ
Դընում են բուռը բիւրաւոր վրշտեր...

Վրշտերի ծովում խորտակուած նաւը
Խորասուզուում է շիրմի անդունդը։